

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՏԱՎՈՒՇ

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

**1** Բնութագրումով որոշել պետությունը.

Այս երկրի ավերը ողողում են Խաղաղ օվկիանոսի արևմտյան ծովերի ջրերը, տարածքով այն Ասիայի ամենամեծ երկիրն է, իսկ աշխարհում գրավում է երրորդ տեղը:Տարածքը կազմում է 9.6 մլն կմ ²:

- 1) Ռուսաստան
- 2) Ղազախստան
- 3) Չինաստան
- 4) Հնդկաստան

**2** Տրվածներից ո՞ր մշակաբույսի պահանջն է ճապոնիան ամբողջությամբ լրացնում իր գյուղատնտեսության շնորհիվ:

- 1) արմավ
- 2) շաքարակիրներ
- 3) թեյ
- 4) բրինձ

**3** Օովի մակարդակի համեմատ, իր միջին բարձրությամբ Աֆրիկան զիջում է միայն.

- 1) Հս Ամերիկային և Եվրասիային
- 2) Հս. Ամերիկային և Հվ. Ամերիկային
- 3) Անտարկտիդային և Եվրասիային
- 4) Ավստրալիային և Հվ.Ամերիկային

**4** Վաղիները չոր գետահուններ են, որոնք հանդիպում են.

- 1) Ավստրալիայում
- 2) Աֆրիկայում
- 3) Անտարկտիդայում
- 4) Եվրասիայում

**5** Տրված լեռնային համակարգերից ո՞րը չի գտնվում Ասիայում:

- 1) Տիբեթի
- 2) Ատլասի
- 3) Կարակորումի
- 4) Հինդիկուշի

6

Պետություն-մայրաքաղաք զույգերից ո՞րը Հարավային Եվրոպայում չէ:

- 1) Իտալիա – Հռոմ
- 2) Ֆրանսիա – Փարիզ
- 3) Իսպանիա – Մադրիդ
- 4) Հունաստան – Աթենք

7

Տրվածներից ո՞ր երկիրը չունի 100 միլիոնից ավել բնակչություն:

- 1) Բանգլադեշ
- 2) Իսրայել
- 3) Պակիստան
- 4) Ինդոնեզիա

8

Նշվածներից ո՞ր երկրի տարածքով է հոսում Դանուբ գետը:

- 1) Իտալիա
- 2) Գերմանիա
- 3) Ֆրանսիա
- 4) Իսպանիա

9

Տրված երևույթներից որում է խախտված պատճառ-անմիջական հետևանք կապը:

- 1) Գրավիտացիա – մակընթացություն և տեղատվություն
- 2) Տեկտոնական սալերի տեղաշարժ – կլիմայի գլոբալ փոփոխություն
- 3) Ստորջրյա երկրաշարժ – ցունամի
- 4) Մշտական քամիներ – օվկիանոսային հոսանքներ

10

Ներքնուորտի ստորին շերտի ֆիզիկական վիճակը տվյալ պահին, որոշակի տարածքի վրա, կոչվում է.

- 1) կլիմագրամ
- 2) քամիների վարդ
- 3) կլիմա
- 4) եղանակ

11

Բնական զոնա – հողային տիպ – բուսական աշխարհ բնության բաղադրիչների զուգորդումներից որում կա սխալ:

- 1) Սավանաներ – կարմրահողեր – բաոբաբ
- 2) Անապատներ – կարմրադեղնավուն հողեր – ֆիկուսներ
- 3) Տունդրա – տորֆաճահճային հողեր – մամուռներ
- 4) Տայգա – պոդզոլային հողեր – փշատերև ծառեր

12

Ո՞ր լեռներն են հանդիսանում բնական սահման Ֆրանսիայի և Իսպանիայի միջև:

- 1) Ատլասի
- 2) Շվարցվալդի
- 3) Ալպեր
- 4) Պիրենեյան

13

Նշվածներից ո՞րը տարածքի մեծությամբ գերիտշոր երկրների խմբի մեջ չի մտնում:

- 1) Կանադա
- 2) Հնդկաստան
- 3) Ավստրալիա
- 4) Չինաստան

14

Նշվածներից ո՞րն է բացարձակ միապետություն:

- 1) Նորվեգիա
- 2) Մեծ Բրիտանիա
- 3) Օման
- 4) Նիդեռլանդներ

15

Նշվածներից ո՞րն է ունիտար երկիր՝ վարչատարածքային կառուցվածքով:

- 1) Գերմանիա
- 2) Ֆրանսիա
- 3) Կանադա
- 4) Հնդկաստան

16

Ինչպե՞ս է կոչվում որևէ փոքր տարածքի մանրամասն պատկերը հարթության վրա՝ որոշակի մասշտաբով և պայմանական նշաններով:

- 1) ազիմուտ
- 2) հատակագիծ
- 3) քարտեզ
- 4) մասշտաբ

17

**Քարտեզների վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է ճիշտ:**

- 1) Գունըը հարթության վրա պատկերելիս չեն առաջանում աղավաղումներ և ստացվում են գերձշգրիտ քարտեզներ:
- 2) Ընդհանուր աշխարհագրական քարտեզների վրա պատկերվում են միայն բնական բաղադրիչները:
- 3) Որքան փոքր է մասշտաբի հայտարարը, այնքան խոշորամասշտաբ է քարտեզը:
- 4) Քարտեզները ընդգրկելով մեծ տարածքներ, պարունակում են շատ մանրամասներ:

18

**Նշվածներից ո՞րը եղանակաստեղծ տարր չի համարվում:**

- 1) մթնոլորտի ջերմաստիճանը
- 2) մթնոլորտի թափանցիկությունը
- 3) մթնոլորտի ճնշումը
- 4) մթնոլորտի խոնավությունը

19

**Տրվածներից ո՞րը չի համարվում բնատարածքային համալիրների բաղադրիչ:**

- 1) ազգերի էթնիկական կազմը
- 2) ջրագրական ռեժիմը
- 3) լեռնային ապարները
- 4) բույսերն ու կենդանիները

20

**Տրված երկրներից ո՞րը ունիտար չի:**

- 1) Ֆրանսիա
- 2) Հնդկաստան
- 3) Իրան
- 4) Թուրքիա

21

**Բնակչության ծնելիության կարգավորմանն ուղղված միջոցառումների՝ վարչական, տնտեսական, քարոզչական և այլն, համակարգը, որի միջոցով պետությունը ձգտում է կարգավորել ծնելիությունը նպատակահարմար ձևով, կոչվում է.**

- 1) ժողովրդագրական ճգնաժամ
- 2) ժողովրդագրական իրադրություն
- 3) ժողովրդագրական քաղաքականություն
- 4) ժողովրդագրական պայթյուն

22


Ըստ մարդաշատության, ո՞ր խմբի մեջ են մտնում 500 հազարից ավելի բնակչություն ունեցող քաղաքները:

- 1) խոշոր
- 2) խոշորագույն
- 3) մեծ
- 4) փոքր

23

Ո՞ր երկրի սեռատարիքային բուրգն է պատկերված նկար 1-ում:

- 1) Հնդկաստան
- 2) Մեծ Բրիտանիա
- 3) Իտալիա
- 4) Ճապոնիա




Նկար 1

24

Միջազգային տնտեսական հարաբերությունների վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Միջազգային զբոսաշրջությունն ու տեղեկատվության փոխանակումը ծառայությունների միջազգային առևտրի ձևերից են:
- 2) Ապրանքների արտահանման և ներմուծման չափերով առաջատար երկրներից են Չինաստանը, ԱՄՆ-ն, Գերմանիան:
- 3) Տնտեսական հարաբերությունների ամենահին և ամենատարածված ձևը միջազգային առևտուրն է:
- 4) Առևտրային հաշվեկշիռը երկիր արտահանված և ներկրված ապրանքների և ծառայությունների արժեքային արտահայտության հարաբերությունն է:



Քարտեզ 1

25

Քարտեզ 1-ի վրա ո՞ր տառով է նշված Կարակաս մայրաքաղաքը:

- 1) Է
- 2) Ը
- 3) Ե
- 4) Զ

26

Քարտեզ 1-ի վրա ո՞ր ծովային հոսանքն է նշված Ս տառով:

- 1) Ֆոլկլենդյան
- 2) Բենգելյան
- 3) Կալիֆոռնիական
- 4) Պերուական

27

Տրված պետություններից ո՞րը ներկայումս չի գտնվում ԱՊՀ կազմում:

- 1) Ղազախստան
- 2) Ուզբեկստան
- 3) Հայաստան
- 4) Վրաստան

28

Տրվածներից ո՞րը բարձր զարգացած երկրների առաջին ենթատիպում գտնվող երկիր չէ:

- 1) Իսպանիան
- 2) Իտալիան
- 3) Գերմանիան
- 4) Ֆրանսիան

29

Քարտեզի վրա միատեսակ մթնոլորտային ճնշում ունեցող, փակ, կոր գծերը կոչվում են.

- 1) իզոհիետներ
- 2) իզոկոլներ
- 3) իզոթերմեր
- 4) իզոբարեր

30

Ըստ պետությունների կառավարման այս ձևի, իշխանությունը փոխանցվում է ժառանգաբար և պետությունը կառավարվում է միապետի թագավորի, կայսրի, սուլթանի և այլոց կողմից:

- 1) համադաշնություն
- 2) խորհրդարանական հանրապետություն
- 3) բացարձակ միապետություն
- 4) նախագահական հանրապետություն

31

Երկրագնդի վրա բնակչության անհավասարաչափ տեղաբաշխման վրա ազդող բնական գործոններից չէ.

- 1) հողակլիմայական պայմանները
- 2) արտադրության զարգացման մակարդակը
- 3) ռելիեֆը
- 4) ջրագրական ցանցը

32

Ինչպե՞ս են կոչվում որևէ երկրի 15-65 տարեկան բնակչությունը, որոնք իրենց ֆիզիկական զարգացմամբ, անհրաժեշտ գիտելիքներով, փորձով կարող են աշխատել տնտեսության որևէ ճյուղում:

- 1) բնակչության տարիքային կազմ
- 2) տնտեսապես ակտիվ բնակչություն
- 3) աշխատանքային ռեսուրսներ
- 4) բնակչության վերարտադրություն

33

Ընտրել ճիշտ պնդումը:

- 1) Քաղաքային բնակչության բաժնի ավելացման, քաղաքների դերի բարձրացման և քաղաքային ապրելակերպի տարածման պատմական գործընթացը կոչվում է տարաբնակեցում:
- 2) Ջարգացած երկրներին բնորոշ է «կեղծ ուրբանացումը»:
- 3) Խոշոր քաղաքների արվարձանների սրընթաց աճի երևույթն անվանում են սուպերուրբանացում:
- 4) ԱՄՆ-ում ձևավորված խոշոր մեգալոպոլիսներն են Բոսվալը, Չիփիթսը և Սան-Սանը:

34

Բնական ռեսուրսների վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Աշխարհի բոլոր երկրներն ու տարածաշրջանները հավասարաչափ ապահովված են բնական ռեսուրսներով:
- 2) Հողը յուրահատուկ ռեսուրս է, որը շատ դանդաղ է վերականգնվում:
- 3) Վառելիքային օգտակար հանածոներն ունեն նստվածքային ծագում:
- 4) Աշխարհում պղնձի տարածման խոշորագույն շրջաններից է Անդյան լեռնային համակարգը:

35

Ինքնաթիռը գտնվում է մի օդանավակայանում, որի աշխարհագրական կոորդինատներն են հյուսիսային լայնության  $45^\circ$  և արևմտյան երկայնության  $80^\circ$ : Որո՞նք կլինեն ինքնաթիռի կոորդինատները, եթե ինքնաթիռը 444 կմ գնա դեպի հյուսիս, 444 կմ դեպի արևելք, 444 կմ՝ հարավ և 444 կմ՝ արևմուտք:

- 1) հվ. լ.  $45^\circ$  և արլ.ե.  $80^\circ$
- 2) հս. լ.  $45^\circ$  և արլ.ե.  $80^\circ$
- 3) հվ. լ.  $45^\circ$  և արմ.ե.  $80^\circ$
- 4) հս. լ.  $45^\circ$  և արմ.ե.  $80^\circ$

36

Տրվածներից ո՞րը չի համարվում հակակարկտային միջոցառում ՀՀ-ում:

- 1) ջրահեռացում
- 2) ինքնաթիռային
- 3) հակակարկտային ցանցեր
- 4) գազագեներատորային

37

Տրվածներից ո՞րը քիմիական արդյունաբերության ենթաճյուղ չէ:

- 1) բնական գազի հիմքի վրա կառուցված սինթետիկ կաուչուկի և այլ քիմիական միացությունների արտադրական համալիր
- 2) սարքաշինության, ավտոմատացման միջոցների ու կառավարման համակարգերի արտադրական համալիր
- 3) ազոտային պարարտանյութերի և ազոտական այլ միացությունների համալիր
- 4) գունավոր մետալուրգիայի արտադրական թափոնների օգտագործման համալիր

38

Հայկական բարձրավանդակի (միջնաշխարհի) մաս չի համարվում:

- 1) միջլեռնային գոգավորությունները
- 2) Հայկական կամ Արևելյան Տավրոսը
- 3) Ներքին Տավրոսի լեռնային համակարգը
- 4) Հայկական հրաբխային բարձրավանդակը

39

Թվարկված բնական աղետներից ո՞րը բնորոշ չի ՀՀ-ին:

- 1) ցունամիները
- 2) երկրաշարժերը
- 3) սելավները
- 4) սողանքները

40


Հողաբարելավման ո՞ր տեսակին են պատկանում լանջերի հերկումը լայնակի ուղղությամբ, ճմապատումը և դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը:

- 1) արհեստական ոռոգում
- 2) ցամաքեցում
- 3) հակաէրոզիոն միջոցառումներ
- 4) քիմիական մելիորացում

41

Քարտեզ 2-ում n ո՞ր տառով է նշված Ջավախքի լեռնաշղթան:

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ



Քարտեզ 2

42

Քարտեզ 2-ում n ո՞ր տառով է նշված Վեդի գետը:

- 1) Է
- 2) Ը
- 3) Ե
- 4) Զ

43

Սպասարկման ոլորտի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Այն հաստատությունները, որոնք գտնվում են տարբեր տարածքներում և չունեն փոխադարձ կապեր, առաջացնում են սպասարկման տարածքային համակարգ:
- 2) Հասարակության զարգացմանը համընթաց՝ ոչ արտադրական (սպասարկման) ոլորտի դերը բարձրանում է:
- 3) Գոյություն ունեն ամենօրյա, դրվագային և պարբերական ծառայություններ:
- 4) Ինչքան մեծ է պահանջարկի հաճախականությունը, այնքան ծառայություններ մատուցող հաստատությունները պետք է մոտիկ լինեն բնակչությանը:

44

Որոշակի իրավական ձևի շրջանակներում գործադիր իշխանության մարմինների նպատակատուղոված ներգործությունը կառավարվող սուբյեկտի վարքագծի վրա՝ շրջակա միջավայրի պահպանության եւ բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման նպատակով, կոչվում է.

- 1) բնապահպանական մոնիթորինգ
- 2) գործարար կենսունակություն
- 3) բնապահպանական կառավարում
- 4) կայուն արտադրություն և սպառում

45

Տրվածներից ո՞րը կայուն գյուղատնտեսության կառուցվածքային բաղադրիչ չէ:

- 1) գյուղատնտեսական հողահանդակների քայքայումը
- 2) անվտանգ կերարտադրության կազմակերպումը
- 3) կենսատեխնոլոգիա և գենային ինժինեռիա
- 4) գյուղատնտեսական թափոնների կառավարում

46

Ըստ կիրառվող մշակության տեխնոլոգիաների ինտենսիվության բնույթի գյուղատնտեսության ուղղություններից չէ.

- 1) ինտենսիվ գյուղատնտեսություն
- 2) փայտամշակում
- 3) էքստենսիվ գյուղատնտեսություն
- 4) պերմամշակություն

47

Աշխարհագրական թաղանթի կենդանի բնության բաղադրիչ է.

- 1) մթնոլորտը
- 2) ջրոլորտը
- 3) քարոլորտը
- 4) կենսոլորտը

48

Այս բույսերն իրենց մեջ պարունակվող տարբեր նյութերի՝ եթերայուղեր, ալկալոիդներ, վիտամիններ և այլն, միջոցով մարդու օրգանիզմի վրա ունենում են հակաբորբոքային, ցավազրկող, քնաբեր, հանգստացնող և այլ բնույթի բուժիչ ազդեցություն: Դրանք են.

- 1) տեխնիկական բույսերը
- 2) կերաբույսերը
- 3) պարենային բույսերը
- 4) դեղաբույսերը

49

Կենսաբազմազանության վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Նախնադարյան մարդու առաջին հիմնական զբաղմունքը գիտնականները համարում են ոռոգովի հողագործությունը:
- 2) Շատ երկրներում գյուղատնտեսական, կառուցապատման և այլ նպատակներով չորացնում են հսկայական տարածություններ զբաղեցնող ճահիճներ եւ ճահճակալած հողեր, որոնք շատ թռչունների բնադրման եւ ձմեռելու վայրեր են:
- 3) Հողագոյացման գործընթացը և հողի բերրիությունը հիմնականում պայմանավորված են կենդանիների (հատկապես՝ մրջյունների, որդերի, տերմիտների, տարբեր տեսակի բակտերիաների) գործունեությամբ:
- 4) Կենդանիներն ունեն ռեխեֆագոյացնող նշանակություն:

50

Ինքնատիպ տարածաշրջանների վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Նոր արդյունաբերական երկրների զարգացման հիմքը կազմում են էքստենսիվ գյուղատնտեսությունը և արդյունահանող արդյունաբերությունը:
- 2) Տնտեսական սրընթաց աճ արձանագրած նոր արդյունաբերական երկրների ժամանակակից տնտեսության ձեւավորման մեջ ամբողջովին բացառվել է օտարերկրյա ներդրումների բաժինը:
- 3) Ինքնատիպ տարածաշրջանները ձևավորվում են բացառապես մեկ գործոնի ազդեցությամբ:
- 4) Ինքնատիպ երկրներից են տնտեսական սրընթաց աճ արձանագրած «նոր արդյունաբերական» պետությունները:

51

Ստորև թվարկվածներից ո՞րը չի համարվում մարդկության համամոլորակային հիմնախնդիր:

- 1) մոլորակի հանքահումքային և բնական այլ ռեսուրսների սահմանափակվածության հետ կապված էներգետիկ և հումքային հիմնախնդիրը
- 2) հազարամյակի զարգացման նպատակները
- 3) զարգացող երկրներում բնակչության արագ աճի հետևանքով առաջացած ժողովրդագրական հիմնախնդիրը
- 4) տարածքային և ազգային հակամարտությունների հիմնախնդիրը

52

Որքա՞ն է Երկրի միջին շառավիղը:

- 1) 6378 կմ
- 2) 6375 կմ
- 3) 6371 կմ
- 4) 6357 կմ

53

Հողմնահարման ինչպիսի տեսակ գոյություն չունի:

- 1) կենսաբանական
- 2) աշխարհագրական
- 3) քիմիական
- 4) ֆիզիկական

54

Փոքրաթեք լանջերի վրա հալչող գերխոնավ հողերի կամ գրունտների փոքր շերտերի համեմատաբար դանդաղ տեղաշարժը, որը կատարվում է ձգողական ուժերին գումարվող սառցածին երևույթների հետևանքով, կոչվում է.

- 1) կոնվեկցիա
- 2) սոլիֆլուկցիա
- 3) էրոզիա
- 4) սուբդուկցիա

55

Տրվածներից ո՞րը չէ համարվում գետերի ջրհավաք ավազանի մուտքի բաղադրիչ:

- 1) արտահոսքը ստորգետնա ուղիներով
- 2) մակերևութային հոսքերը
- 3) տրանսպիրացիան բույսերի միջոցով
- 4) մթնոլորտային տեղումները

56

Ընտրել Հայկական լեռնաշխարհի հրաբխային ծագում ունեցող լեռները:

- |                   |                    |
|-------------------|--------------------|
| 1) Հայկական պար   | 5) Ծաղկունյաց      |
| 2) Փամբակ         | 6) Արագած          |
| 3) Արևելապոնտական | 7) Բյուրակն        |
| 4) Սավալան        | 8) Հայկական Տավրոս |

57

Ընտրել այն բնակավայրերը, որոնք գտնվում են Տավուշի մարզում:

- |             |                |
|-------------|----------------|
| 1) Իջևան    | 5) Նոյեմբերյան |
| 2) Ալավերդի | 6) Վանաձոր     |
| 3) Բերդ     | 7) Դիլիջան     |
| 4) Ճամբարակ | 8) Թումանյան   |

58

Ընտրել ՀՀ այն մարզերը, որոնք սահման ունեն Ադրբեջանի հետ:

- |              |              |
|--------------|--------------|
| 1) Արագածոտն | 5) Արարատ    |
| 2) Կոտայք    | 6) Շիրակ     |
| 3) Տավուշ    | 7) Վայոց ձոր |
| 4) Լոռի      | 8) Արմավիր   |

59

Ընտրել այն երկրների համարները, որոնք ապահովված են նավթի պաշարներով:

- |                    |             |
|--------------------|-------------|
| 1) Գերմանիա        | 5) Իտալիա   |
| 2) ՌԴ              | 6) Հայաստան |
| 3) Սաուդյան Արաբիա | 7) Կանադա   |
| 4) Իրան            | 8) Ճապոնիա  |

60

Ընտրել այն երկրների համարները, որոնք համարվում են «նոր արդյունաբերական»:

- |              |                    |
|--------------|--------------------|
| 1) ՀԱՀ       | 5) ՌԴ              |
| 2) Նորվեգիա  | 6) Կանադա          |
| 3) Սինգապուր | 7) Մալայզիա        |
| 4) Սուդան    | 8) Հարավային Կորեա |

61

Ընտրել այն երկրների համարները, որոնք ելք ունեն դեպի Միջերկրական ծով:

- |                |             |
|----------------|-------------|
| 1) Հունաստան   | 5) Եթովպիա  |
| 2) Մարոկկո     | 6) Հորդանան |
| 3) Պորտուգալիա | 7) Չադ      |
| 4) Իսպանիա     | 8) Ռումինիա |

62

Հրագրան գետի վրա կառուցված ջրէկ-ները գրել հարավից հյուսիս հաջորդականությամբ:

- 1) Արգնու
- 2) Քանաքեռի
- 3) Արգելի

63

Գրել տրված պետություններն ըստ տարածքի մեծության նվազող հաջորդականությամբ:

- 1) Չինաստան
- 2) Ֆրանսիա
- 3) Կանադա

64

Գետի միջին լայնությունը 15մ է, միջին խորությունը 50 սմ, գետի ջրի արագությունը 50մ/վ: Հաշվել գետի ծախսը (մ<sup>3</sup>/վ):

65

Երկրում երկաթի հետախուզված պաշարները 250մլն.տ. են, իսկ տարեկան հանույթը 5 մլն.տ.: Քանի՞ տարի կբավարարի երկաթի պաշարները, եթե հանույթի տարեկան արդյունահանման ծավալները չփոխվեն:

66

Հաշվել Արեգակի ճառագայթների անկման անկյունը սետեմբերի 23-ին Երևանում:

67

Օդի բացարձակ խոնավությունը  $15\text{գ/մ}^3$  է, իսկ հագեցնելու համար անհրաժեշտ է 50 գ ջուր: Հաշվել հարաբերական խոնավությունը:

68

Ա քաղաքի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ.  $50^\circ$ , արլ.ե.  $15^\circ$ , իսկ Բ քաղաքի կոորդինատները՝ հս.լ.  $45^\circ$  և արմ.երկ  $30^\circ$ : Որքան կլինի նրանց միջև գոտիական ժամանակների տարբերությունը:

**Մարդ բնություն փոխհարաբերությունների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ:**

- 1) Քիմիական ու մետաղաձուլական արդյունաբերությունը, վառելիքաէներգետիկան, ավտոմոբիլային տրանսպորտը, շինարարությունը, կենցաղային թափոնները համարվում են կենսաբանական աղտոտման աղբյուրներ:
- 2) Էկոլոգիական ճգնաժամի դեպքում խախտվում են նյութերի բնական շրջապտույտը, համակարգի կապերը, միջավայրը սկսում է քայքայվել, նախկին բնական լանդշաֆտներն իրենց տեղը զիջում են ավելի ցածր արդյունավետություն ունեցող մարդածին լանդշաֆտներին:
- 3) Բնությունը մարդուն շրջապատող, նրա գոյությունն ապահովող բնական տարրերի երևույթների ամբողջությունն է:
- 4) Էկոհամակարգի գլխավոր հատկանիշներն են ինքնակարգավորումը և ինքնավերականգնումը:
- 5) Հասարակության զարգացմանը զուգընթաց՝ փոքրանում է մարդու ներգործությունը բնական միջավայրի վրա:
- 6) Քիմիական աղտոտման դեպքում տեղի է ունենում միջավայրի քիմիական հատկանիշների փոփոխություն:

**ՀՀ-ի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ:**

- 1) ՀՀ-ի ՏԱԴ-ը ժամանակի ընթացքում անփոփոխ է և նրա նպաստավոր հատկանիշերը մնայուն են:
- 2) Գտնվում է ԱՄՆ-ի, Եվրամիության երկրների, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի տնտեսական ու քաղաքական շահերի բախման գոտում:
- 3) Տարածքի մեծությամբ ու բնակչության թվով փոքր երկիր է և զիջում է աշխարհի ավելի քան 130 պետությունների:
- 4) ՀՀ-ն գտնվում է կարևոր միջազգային տրանսպորտային ուղիների (Եվրոպան Կենտրոնական ու Հարավային Ասիային եւ Ռուսաստանը Մերձավոր Արևելքին կապող) խաչմերուկում:
- 5) ՀՀ-ն տնտեսության զարգացման մակարդակով հետինդուստրիալ երկիր է:
- 6) Մոտ է գտնվում աշխարհի բարձր զարգացած երկրներին և հզոր տնտեսական կենտրոններին: